

Foyer Cardinal Aghajanian
Anjar-Liban
Tel 08-620406

Աղաճանեան Սանուց Տուն
Այնճար-Լիբանան
Հեռ. 08-620406

Այնճար, 29 Յուլիս 2020

Մեծայարգ Պատասխանատուներ
Հայաստանի Համահայկական Հիմնադրամի
Լիբանանի Գործադիր Մարմինին

Ձեզ կ'ողջունեմ ամենայն եղբայրութեամբ ու յարգանքով:

Ս. Յակոբ առաքելալը կ'ըսէ. «Մաքուր և անարատ բարեպաշտութիւնը Աստուծոյ ու մեր Հօր առջեւ այս է՝ այցելել որբերուն եւ այրիներուն՝ անոնց նեղութիւններուն մէջ. » (Յակ.1, 27):

Մեր երկրին ճգնաժամային այս դժուար կացութեան մէջ, Ձեր Հիմնադրամը կու գայ օժանդակելու մեր որբ, գրկեալ ու կարօտեալ սան-աշակերտներուն:

Ուստի, Ձեր ունեցած անդրադարձումը իսկական գործադրումն է Ս. Գրքի հրահանգին:

Այս գրութեամբ՝ «Աղաճանեան Տան» սաներուն անունով Ձեզի կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը Ձեր ազնիւ մտածումին ու նպաստին համար (1100\$):

Թող ամենակալ Աստուած վարձահատոյց ըլլայ Ձեզի եւ արդիւնաբերէ Ձեր ջանքերը ի նպաստ մեր Ազգին զաւակներուն ու հաստատութիւններուն:

Աղօթքով եւ օրհնութեամբ՝

Տ. Ալիշան Քին. Աբարդեան
Տեսուչ




ثانوية هاراتش كالوسد كلبنكيان - عنجر - لبنان

ԱԶԳ. ԳԱԼՈՒՍ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Մաշտոց փողոց, Այնճար-Պեքաա-Լիբանան
Հեռ: 08/620616 Ֆաքս: 08/620614

Ե. նամակ: admin@cgulbenkian.com

Կայք: <http://cgulbenkian.com>




CALOUST GULBENKIAN
SECONDARY SCHOOL

Mashdots street, Ainjar-Bekaa-Lebanon

Tel: 08/620616 Fax: 08/620614

E-mail: admin@cgulbenkian.com

Website: <http://cgulbenkian.com>



29 Յուլիս, 2020

Յարգարժան Հայաստան Համահայկական Հիմնադրամի Լիբանանի Վարչություն,

Մոյն գրութեամբ կը յայտնենք մեր խորին երախտագիտութիւնը հիմնադրամի այն զօրակցութեան համար, որով հիմնադրամը նիւթական օժանդակութեամբ սատար կը հանդիսանայ ազգային վարժարանիս գործունէութեան:

Ընդհանրապէս՝ գօտեպնդուած ենք այս ազնուական զօրակցութեամբ: Ունինք այն գեղեցիկ զգացումը, որ ազգային կրթութեան մեր առաքելութեան մէջ առանձին չենք եւ կը վայելենք համայն հայութեան եւ մեր հայրենի պետութեան գուրգուրոտ հոգածութիւնն ու վերաբերումը:

Ուրախ ենք, որ այս նեցուկով հիմնադրամը լիբանանահայ գաղութի մէկ կարեւոր կռուանը կը նկատէ սերունդներու հայեցի դաստիարակութիւնն ու անոր դարբնոցը հանդիսացող հայ դպրոցը, առանց որուն մեր հաւաքական կեանքն ու երթը կը վնասուին եւ չեն ունենար շարունակականութիւն պահելու երաշխաւորութիւն:

Այս առթիւ ընդունեցէք մեր սրտագին բարեմաղթութիւնները:

Յարգանքներով՝

Տնօրէն

Արմէն Թաշճեան





ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՅՆՃԱՐ

«Կրթե՛ մանուկը իր ճամբան սկսած արեւը, որպէսզի իր ծերութեան արեւն անկէ շխտորի»:
Առակաց 22:6

Յարգելի Անդամներ «Հայաստան» Համայնական հիմնադրամի,

Ողջոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով:

Այնճարի Հայ Աւետարանական Երկրորդական Վարժարանի Տնօրէնութեան եւ Հոգաբարձութեան անունով կ'ուզենք մեր խորին շնորհակալութիւնները յայտնել ձեզի, ձեր կատարած նուիրատութեան, 2400\$ (երկու հազար չորս հարիւր ամերիկեան տօլարի), որ կատարեցիք մեր Վարժարանին Լիբանանի այս ծանր հանգրուանը շրջանցնելու ջանքերով:

Միասնաբար կը ծառայենք Հայ դպրոցի բարելաւման:

Թող Աստուած օրինէ ձեզ առատօրէն:

29 Սեպտեմբեր, 2020

Պատ. Յակոբ Արքայաշարեան
Տնօրէն





Պեյրուի, 17 Յուլիս 2020

Յարգարժան ատենապետ եւ անդամներ՝ «Հայաստան
Համահայկական Հիմնադրամ»ի Լիբանանի Գործադիր Մարմնի,
Աստ

2019-2020 կրթական տարեշրջանի աւարտին՝ շնորհակալութեամբ
ստացանք Հիմնադրամի միջոցներով հանգանակուած 3,250 ԱՄՆ
Տոլարի գումարը, որ իբր կրթանպաստ՝ պիտի տրամադրուի մեր
վարժարանի կարօտեալ սաներուն:

Ձեր այս բարի արարքով՝ կ'օժանդակէք եւ օգտակար կը հանդիսանաք
մեր սաներու ընտանիքներուն, որոնք Լիբանանի դժուարին այս
պայմաններուն տակ՝ կը ջանան գոյատեւել եւ հայեցի
դաստիարակութեամբ օժտել իրենց զաւակները:

Բարձր կը գնահատենք մեր Վարժարանի առաքելութեան սատար
հանդիսանալու Ձեր վերանորոգ պատրաստակամութիւնը, եւ Ձեզի կը
մաղթենք առողջութիւն, երկար կեանք և յաջողութիւն՝ Ձեր ազգանուէր
ու բարերար գործունէութեան:

Յարգանքով՝

ՀԲԸՄի Վարժարաններու Տնօրէն
Արա Վասիլեան





16 Յուլիս, 2020

Մեծայարգ
Ատենապետ եւ անդամներ՝
Համահայկական Հիմնադրամի – Լիբանան,

Այս տագնապալից օրերուն մէջ, ձեր աջակցութիւնը մեր վարժարանին կուգայ յոյս ներշնչելու, որպէսզի կարենանք մեր Աստուածատուր առաքելութիւնը շարունակել՝ Հայ սերունդներ կերտելու մեր աշխատանքին մէջ: Սրտանց կը գնահատենք ձեր ներդրումը որ կատարեցիք Վարժարանի Բարգաւաճման Ի խնդիր:

Աստուած օրինէ ձեր առատաձեռն հոգին եւ շարունակէ գործածել զայն ուրիշներու կարիքներուն հասնելու:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝





Պեյրուօ, 15 Յուլիս 2020

Հայաստան Համահայկական Հիմնադրամ
Երեւան – Պեյրուօ

Մեծարգո՛յ տիկնայք եւ տեարք,


Շնորհակալութեամբ ստացանք Հայաստան Համահայկական Հիմնադրամէն, ձեռամբ Հիմնադրամի Լիբանանի մասնաճիւղի անդամներուն, կանխիկ 1500 (հազար հինգ հարիւր) ամերիկեան տոլար իբրեւ լիբանանահայ վարժարաններու օժանդակութիւն:

Շնորհակալութիւն կը յայտնենք Հիմնադրամին, որ ահա երկրորդ անգամ ձեռք կը մեկնէ լիբանանահայութեան, լիովին արդարացնելով իր անուան «համահայկական» բաղադրիչը:

Կը մաղթենք, որ այս մշուշը արագօրէն կը փարատի Լիբանանի երկնակամարէն եւ մենք կը շարունակենք մեր օժանդակութիւնը ուղղել Հիմնադրամի այլ ծրագիրներուն՝ հայրենիքի մէջ, թէ այլուր:

Վարձքը կատար նաեւ Հիմնադրամի Լիբանանի յանձնախումբին:

Շնորհակալութեամբ



Արմէն Իրնէշեան (բգթ)

Տնօրէն





Ֆանար, 17 Յուլիս 2020

Յարգարժան՝
«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի
Լիբանանի Գործադիր Մարմնի

Վարժարանիս տնօրէնութիւնը կու գայ իր ջերմագին շնորհակալութիւնը
յայտնելու Ձեզի, վարժարանիս ձեր կողմէ յատկացուած 3,500 \$ (Երեք հազար
հինգ հարիւր Ամերիկեան տոլար) նուիրատուութեան համար:

Կ'աղօթենք, որ նախախնամութեան բարիքները լիառատ բաշխուին մեր
բարերարներուն:

Տնօրէնութիւն





Date: 17 / 07 / 2020

Ref. : Prot. D 59 / 2020

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի
Լիբանանի Գործադիր Մարմին


Յարգելի տիկնայք եւ պարոնայք,

Շնորհակալութեամբ ստացանք Հայ կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանին շնորհած ձեր դրամական օժանդակութիւնը՝ 7500 ամերիկեան տոլարի չափով:

Այսու կը կցենք ենք նաեւ փոխանցուած գումարին ստացագիրը:

Ընթացիկ տարեշրջանին այս երկրորդ անգամն է, որ վարժարանս կ'արժանանայ ձեր նեցուկին: Կը վստահեցնենք, որ այս անգամ եւս ձեր յատկացումը էապէս պիտի նպաստէ, որ ներկայ չափազանց դժուարին պայմաններուն մէջ Մեսրոպեանը լիարժէքօրէն շարունակէ իր կենսագործունէութիւնը՝ ի շահ լիբանանահայ աշակերտական սերունդին:

Կրկին շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզի ու կը մաղթեմ մեծագոյն յաջողութիւններ՝ Հայաստանի, Արցախի եւ Հայկական Սփիւռքի հզօրացման ուղղուած ձեր գործերուն մէջ:



Կրկուար Գալուստ
Տնօրէն

Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարանի

Հինգշաբթի, 16 Յուլիս 2020

Պատուարժան Տնօրէնութիւն Հայաստան Համահայկական Հիմնադրամի,



Ազգային Միացեալ Վարժարանի տնօրէնութիւնը կու գայ իր խորհին շնորհակալութիւնը յայտնելու ձեր կատարած նուիրատուութեան համար:

Հայկական վարժարաններուն հանդէպ ձեր ցուցաբերած յատուկ զօրակցութիւնը աւելիով կը քաջալերէ մեզ, շարունակելու համար մեր կրթական աշխատանքները Լիբանանի քաղաքա-տնտեսական այս դժուարին պայմաններուն: Միութեամբ կը զօրանանք եւ հնարաւորութիւն կը ստեղծենք մեր ծրագիրները իրագործելու:

Կ'ուզենք նաեւ մեր յարգանքը եւ երախտագիտութիւնը յայտնել ձեր հոգածութեան, հետաքրքրութեան եւ ազնուական վերաբերումին: Ձեզի կը մաղթենք յարատեւ վերելք եւ վճռակամութիւն՝ ձեր ազգանուէր առաքելութիւնը նոյն թափով շարունակելու համար:

Շնորհակալութեամբ՝

Վարչական Տնօրէն
Ազգային Միացեալ Վարժարանի



ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՅԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆ
الكلية العربية المتحدة
UNITED ARMENIAN COLLEGE



ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ – ՌԱՈՒՏԱ
MEKHITARIST FATHERS SCHOOL – RAWDA
#HappiestPlaceonEarth

Յուլիս 20 2020


Պատուարժան Լիբանանի գործադիր Մարմին,
Հայաստան համահայկական հիմնադրամի:

Միիթարեան Վարժարանի Տնօրէնութեան անունով շնորհակալութիւն կը յայտնենք Հայաստան համահայկական հիմնադրամի եւ Ձեր Գործադիր մարմնին, ձեր տարած նուիրումին և ջանքերուն շնորհիւ, Լիբանանահայ կրթական հաստատութիւններուն համար կատարուած սիւթական օժանդակութեան համար:

Ուսումը լաւագոյն միջոցն է աւելի լաւ ապագայ մը ստեղծելու: Կը շնորհաւորենք ձեր տարած աշխատանքը եւ յաջողութիւն կը մաղթենք:

Մնաք ամուր ձեր առաքելութեան մէջ, ի սպաս հայ ժողովուրդին:

Ջերմագին մաղթանքներով,


Միիթարեան Վարժարանի Տնօրէնուհի,
Մէրի Ղազարեան Կիւրիւնլեան



Նամակ թիվ 13 2019-2020

15 Յուլիս 2020

Պատուարժան՝ Վարչուհին

Հայաստանի Համահայկական Հիմնադրամի- Լիբանան

Շնորհակալութեամբ ստացանք 1500 Ամ.Տ. իբրեւ յատկացում Ազգ. Նուպարեան-Խրիմեան Միջնակարգ Վարժարանին, պատկարելի « Հայաստանի Համահայկական Հիմնադրամ »ի վարչութեան կողմէ: Բարձր գնահատելով Լիբանանի տնտեսական այս դժուարին օրերուն ձեր մասնակցութիւնը կը բերեք վարժարանիս նիւթական ծանր կացութեան նպաստելու գնով:

Շնորհակալութեան Լաւագոյն

Մաղթանքներով

Ազգ. Նուպարեան-Խրիմեան Վարժարանի

Տնօրէնութիւն

Վաչէ Հարմանտայեան



9/15/20
[Handwritten signature]



Armenian Benevolent Educational Union

SAHAGIAN - L. MEGUERDITCHIAN COLLEGE

Հայկական Կրթական Բարեսիրական Միություն

ՍԱՀԱԿԵԱՆ - Լ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ԳՈՒԼԷՃ

Sin El-Fil - Tel.: 01/492726 - Cell.: 03/792812

Մին էլ Ֆիլ, 17 Յուլիս, 2020

Պատուարժան՝

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Լիբանանի Գործադիր Մարմին,

Շնորհակալութեամբ ստացանք հազար հինգ հարիւր ամերիկեան տուար գումարը՝ 1500\$, որպէս օժանդակութիւն Սահակեան Լ. Մկրտիչեան Գուլէճին:

Լիբանանահայ գաղութին կարօտեալ աշակերտներուն, Սահակեան Լ. Մկրտիչեան Գուլէճի շրջանակին եւ տնօրէնութեան անունով կու գանք խորին շնորհակալութիւն յայտնել Պատուարժան Մարմնիդ: Լիբանահայ դպրոցը, որոնց շարքին Սահակեան Լ. Մկրտիչեան Գուլէճը կանգուն պահելը ազգային նուիրական պարտականութիւն է, որովհետեւ Լիբանահայ դպրոցը էր եւ կը շարունակէ մնալ հայ սփիւոքին գոյատեւման ծառայող անփոխարինելի կրօնան:

Ուժ, կորով եւ յարատեւութիւն կը մաղթենք «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Լիբանանի Գործադիր Մարմնին իր կատարած ազգանուէր եւ կրթանուէր ճիգերուն համար Հայաստանի, Արցախի թէ սփիւոքի մէջ:

Յարգանքներով՝

Տնօրէն





Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Ս. Խաչ - Հարպոյեան Բարձրագոյն Վարժարան
بطريكية الأرمن الكاثوليك مدرسة الصليب الأقدس - هاربويان الثانوية
ARMENIAN CATHOLIC PATRIARCHATE'S HOLY CROSS - HARBOYAN HIGH SCHOOL

Զալքա, 17 Յուլիս 2020

Պատուարժան վարչութիւն
Հայաստան Համահայկական Հիմնադրամի,

Հայ Կաթողիկէ Ս. Խաչ - Հարպոյեան Բարձրագոյն Վարժարանի տնօրէնութեան անունով խորին շնորհակալութիւն կը յայտնենք ձեր կատարած նուիրատուութեան համար:

Լիբանանի մէջ ներկայիս տիրող ընկերային-տնտեսական ճգնաժամային պայմաններուն պատճառով այս դժուարին կացութեան մէջ, ձեր այս ազնիւ գործը, յոյսի նշոյլ մըն է մեզի համար, որ քաջալերանք կը հանդիսանայ մեզի շարունակելու մեր գործը ի նպաստ հայ աշակերտին եւ Լիբանանի հայ գաղութին:

Կ'աղօթենք Ամենաբարին Աստուծոյ որ միշտ իր հավանիին տակ պահէ Հայաստան Համահայկական Հիմնադրամն ու անոր անձնուէր անդամները, ու օրինէ անոնց աշխատանքը:

Վարձքերնիդ կատար:

Արամ Գարատաղեան
Մեծաւոր





Յուլիս, 16 2020

Մեծայարգ Ատենապետ և Անդամներ,
Համահայկական Հիմնադրամի Լիբանանի Գործադիր Մարմինի,


Պելրութի Վահան Թեքեյան Վարժարանի մեծ ընտանիքին անունով մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Ձեր նուիրատուութեան՝ \$1500 վարժարանիս 2019-2020 կրթական տարեշրջանի Ձեր կատարած կրթանպաստին:

Լիբանանի ընկերային ու տնտեսական դժուարին պայմաններուն մէջ կատարուած նման նպաստ մը կու գայ հաստատելու որ, հասնելով Ձեզի հարազատ վարժարանին, բարերար ներդրում մը կը կատարէք ազգային կրթութեան մարզին մէջ, որպէսզի հայ դպրոցը ժամանակակից ու արդիական պայմաններու մէջ շարունակէ իր առաքելութիւնը:

Երախտագիտութեան ու գոհունակութեան զգացումներով, անգամ մը եւս շնորհակալութիւն կը յայտնենք Ձեր ազգանուէր ու սուրբ գործունէութեան համար: Առանց Ձեր ու Ձեզ նման ազգայիններու անսակարկ նուիրումին, նիրթական և բարոյական աջակցութեան, կարելի պիտի չըլլայ մեսրոպակերտ այս փարոսը լուսաշող պահել, ինչպէս նաեւ կարիքաւոր ընտանիքի մը՝ շնորհալի գաւակը բարձր ուսման հասցնել:

Ապրիք առողջ և թող Աստուծոյ օրհնութիւնը առատօրէն ցօղուի Ձեր վրայ ու Ձեր կեանքը պսակուի արեւշատ օրերու հետ միասին՝ սիրով և առատ յաջողութիւններով:

Յարգանքներով՝



Տնօրէնուհի